ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքում տեղական տուրքերի և վճարների 2025 թվականի դրույքաչափերը և արտոնությունները սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի ավագանու որոշման նախագծի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության պետական փորձագիտական եզրակացությամբ արված դիտողությունների և առաջարկությունների

1. Արդարադատության նախարարություն	19.12.2024թ. №/27.1/51940-2024 գրության
«Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքում տեղական տուրքերի և վճարների 2025 թվականի դրույքաչափերը և արտոնությունները սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի ավագանու որոշման նախագծի 1-ին կետում, հավելված 1-ի և հավելված 2-ի վերնագրերում «Վաղարշապատ» բառից առաջ անհրաժեշտ է լրացնել «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի» բառերը:	Ընդունվել է.
2. Հավելված 1-ի և հավելված 2-ի համարակալումներն անհրաժեշտ է համապատասխանեցնել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջներին, որոնց համաձայն՝ ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերում դրույթները շարադրվում են հերթական համար ունեցող կետերի տեսքով: Կետերը կարող են բաժանվել միայն համարակալված ենթակետերի, իսկ ենթակետերը՝ միայն համարակալված պարբերությունների: Կետերը համարակալվում են արաբական թվանշաններով, որոնք տեքստից բաժանվում են միջակետով: Ենթակետերը համարակալվում են արաբական թվանշաններով, որոնք տեքստից բաժանվում են փակագծով:**Պարբերությունները համարակալվում են հայերենի այբուբենի փոքրատառերով, որոնք տեքստից բաժանվում են միջակետով:**	Ընդունվել է.
3. Հավելված 1-ի 1-ին կետի 2-րդ ենթակետում «Բազմաբնակարան բնակելի շենքերի կառուցման դեպքում «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն սահմանված դրույքաչափը հաշվարկել 3 գործակցի կիրառմամբ», «Բազմաբնակարան բնակելի շենքերի կառուցման համար 1800000 /մեկ միլիոն ութ հարյուր հազար/» և «Բազմաբնակարան բնակելի շենքերի կառուցման համար 600000 /վեց հարյուր հազար/» պարբերությունն անհրաժեշտ է հանել՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքով բազմաբնակարան բնակելի շենքերի կառուցման համար տեղական տուրք սահմանված չէ:	Ընդունվել է. Կատարվել է համապատասխան փոփոխություն

4. Հավելված 1-ի 1-ին կետի 2-րդ ենթակետի «բ» պարբերությունում «(ինչպես նաև Երևան քաղաքի վարչական սահմաններում կառուցվող՝ 300 քառակուսի մետրից ավել ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի տան)» բառերն անհրաժեշտ է հանել:	Ընդունվել է.
5. Հավելված 1-ի 3-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերի ձևակերպումներն անորոշ են, ուստի անհրաժեշտ է վերանայել և շտկել:	Ընդունվել է. Կատարվել է հստակեցում
6. Հավելված 1-ի 10-րդ կետի 1-ին ենթակետում նախատեսվում է հետևյալը. «Ոսկեհատ բնակավայրում 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տաս հազար մեկ դրամից մինչև տասներեք հազար մեկ դրամ, «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն 10000 ՀՀ դրամ սահմանված դրույքաչափը հաշվարկել 0.75 գործակցի կիրառմամբ»: Սույն դեպքում նկատի ունենալով, որ տեղական տուրքի հաշվարկը սահմանված է տաս հազար մեկ դրամից սկսած, ուստի «10000» թիվն անհրաժեշտ է փոխարինել «10001» թվով և 0.75 գործակիցը կիրառել 10001 ՀՀ դրամ դրույքաչափի նկատմամբ: Նույն դիտարկումը վերաբերվում է նաև Հավելված 1-ի 10-րդ կետի 1-ին ենթակետում առկա համանման կարգավորումներին:	Ընդունվել է.
7. Հավելված 1-ի 15-րդ կետի 5-րդ ենթակետով նախատեսվում է՝ էլեկտրոնային էկրանի միջոցով արտքին գովազդ տեղաբաշխելու դեպքում «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի 12-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն 1500 ՀՀ դրամ սահմանված դրույքաչափը հաշվարկել 1.5 գործակցի կիրառմամբ 2250 /երկու հազար երկու հարյուր հիսուն/: «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքով էլեկտրոնային էկրանի միջոցով արտաքին գովազդ տեղաբաշխելու համար տեղական տուրք սահմանված չէ, ուստի Հավելված 1-ի 15-րդ կետի 5-րդ ենթակետով նախատեսվող կարգավորումն անհրաժեշտ է հանել:	Ընդունվել է.
8. Հավելված 1-ի 19-րդ կետի 2-րդ, 3-րդ և 4-րդ ենթակետերում նշված է, որ «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն դրույքաչափերը հաշվարկել 0.75 գործակցի կիրառմամբ, մինչդեռ հաշվարկված է 0.5 գործակցով, ուստի անհրաժեշտ է վերանայել և շտկել:	Ընդունվել է. Կատարվել է ուղղում